




Տարեկան դիմել է . . . 130 զուշ
Վերադարձնայ . . . 70 "
Եւամանայ . . . 40 "
Մէկ ծանուցումը տողին 60 փարա է :
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1 ին
եւ 16 ին կը սկսին :

Դուրս երթալը լցակիւններուն ճամբուն
ճակարդ ամեն մէկ թիւին համար 20
փարա է :
Լրացուցա վերաբերեալ նամակ կամ որ
եւ ինչէր որով ինչ, խմբագրին պիտի
ուղղուի . եւ ամսոյն ճամբուն ծախս
քը խրկուին փարա է :

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԱՆԱԲԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 21 ՓԵՏՐՈՎԱՆ

Պարսկաստանէն եկած լուրերը Պարսից կառավարութեան բաժնի կողմէրէն զուրկ չանցեր եւ պատերազմական պատրաստութիւնները կը ծանուցանեն :

Երկրաններուն դէմ պատերազմող զօրաց բանակին հետ գտնուելու նոր օգնութիւններ կը խրկուին թիւ հրանքի, խոյի եւ Սպահանի զօրքերէն : Արջին անգամ խրկուած զօրքերուն թիւը 18 հազարի կը հասնի՝ որոնց հրամանատարն է Ֆեղ-Ալի խանը :

Հրազնի եւ Պարսկաստանի կողմերն ալ բաղնազանդ զօրք խրկուցուան անգղիացւոց դէմ գնելու համար՝ թէ որ երկրին ներսերը քաղելու ըլլան : Եւս վերջիններուն ալ թիւը 30 հազարի կը հասնի, որոնց 20 հազարը ձիաւոր են : Եւս զօրքերուն ալ հրամանատարութիւնը Եւսթիւլ Պաշայի խանին յանձնուած է :

Արմանշահի մէջ ալ շատ զօրք գումարած է Օսմանեան սահմանադիրին մօտ :

Պարսից շահը Պարսկաստան կրթաւիք զօրաց բանակին մը հանգէս ըրաւ Սուլթանիէ ըստ ծանուցումը :

Պարսկաստանի դէպքերը բոլոր կը բնականներէն դրամաժողովի ստորագրութիւն բացաւ պատերազմին ծախուցը նպաստելու համար, եւ միայն ինքը 4000 թուան ստորագրութեամբ :

Եւս լուրերը առողջ նամակները կաւելցնեն, թէ Ռուսիոյ տէրութիւնը դրամով օգնութիւն կընէ Պարսից կառավարութեան :

Եւս նամակները կը ծանուցանեն նաեւ, թէ Ռուսիոյ տէրութիւնը կաշխատի Ռուսիայի խանութեան երկրները ձեռք ձգելու, որպէս զի իր սահմանները մինչեւ Հնդկաստանի անդրեւացւոց երկրներուն մօտ հասցնեն :

Ռուսիոյ այս գիտաւորութիւններէն Պուլխարայի Լիւմի Եւսարուլահ խանը վախճալով, ի. իրան պաշտօնական միջնորդութիւնը խնդրել է, որպէս զի Ռուսիոյ կառավարութիւնը Քուսխանի անկախութեանը չգոչի, եւ Սիր-Տարիա գետին երկրքը Քուսխանի հօդին մէջ չնսած բերդերը քաղէ ու պարսիկ :

Իրօք ալ՝ անցեալ շաբթու Պուլխարայի խանին կողմէն գետնան մը եկաւ Կ. Պոլիս :

Պաղատան եկած լուրերը կը ծանուցանեն, թէ անգղիացիք զործակալ-

ներ խրկել են հոն՝ ուղա, ձի, ջորի եւ այլն գնելու, եւ երսուն հազար զօրաց պաշար պատրաստելու :

Հնդկաստանէն գալիք նոր զօրքերը մինչեւ յունվար 9/21 դեռ Պարսկաստանի ծովածովը չեն հասած :

Ենգղիացիք ալ գեռ յառաջ քաշելու շարժում մը չեն ըրած, եւ միայն պատրաստութիւն կը տեսնեն :

Երկու անգղիական շքանաւ Պարսկաստանի ծովեզերքները աչքէ անցուցած ժամանակին, 3000 պարսիկ զօրաց զուռը մը տեսնել են Պէնտըրի մօտ, եւ իրենց թնդանօթներովը զանաւոր ջրուներ լեռները փախուցել են :

Փարսիցէն փետր. 12 թուով անգղիական Սուլթան-Քալի ըրազրին դրամ յանակ մը հետեւեալ լուրը կուտայ :

« Ենգղիոյ կառավարութիւնը Պարսից տէրութեան առաջարկած պայմանները մեծապէս չափաւորեց . Ստորագրումն փոխվելը չպիտի պահանջէ : Պէնտըրի խանին ու լորտ Քալիի մէջ եղած դեպքանախօսութիւններուն հիմն է՝ Պարսից Հէրաթէն քաշվել, անգղիացւոց ալ Պէնտըրի Պուշարը վերստին Պարսից յանձնելը :

Լոտրայէն ու Փարսիցէն եկած վերջին լուրերը մեծ յոյս կուտան անգղիացւոց ու պարսից վէճը քիչ օրէն յաշնդութեամբ լուծվիլու :

Պաղղեոյ օրէնադրական ժողովը ամսոյն 4/16 ին բացվեցաւ սովորական արարողութեամբ :

Եւս օրը ծերակուտին եւ օրէնադրական ժողովոյն անդամները թիւյլութիւն պաշար ժողովեցան . ծերակուտին նախագահն էր Պ. Թաօրան, իսկ օրէնադրական ժողովոյն նախագահն էր Պ. Հրանիէր՝ որ Սուրի կոմսը Ռուսաստանը լալուն համար՝ անոր տեղը զրկեցաւ : Տէրութեանց գետնաները, կարգինաւները, տէրութեան պաշտօնականները, մարաշախները, ծովապետները եւ բոլոր քաղաքական ու զինուորական գլխաւոր պաշտօնատարները ներկայ էին :

Այս օրէն ժամ մը ետքը կայսրը հասաւ հոն հանդիսի, եւ թնդանօթները որոտաւ սկսան :

Պայքար՝ ժողովականները բարեւելն ետեւ՝ ատենախօսութիւն մը ըրաւ, որուն մէջէն արտաքին քաղաքականութեան վրայ եղած հետեւեալ մասը արժան կը համարէր թարգմանել :

« Ենցեալ տարի՝ այս ժողովին բացվելուն առթիւ ըրած ատենախօսութեան վերջը աստուածային պաշտպանութիւնը խնդրած էի : Պաղաւէն Եւստուծոյ, որ մեր ջանքերը մարդկութեան

եւ քաղաքակրթութեան օգտակար ըլլալու առաջնորդէ : Եւս աղօթքս ընդունելի եղած կերեւի : Խաղաղութիւնը ըստորագրուցաւ . Փարսից դաշնադրութեան մէկ քանի երկրորդական կէտերուն վրայօք ծագած դժուարութիւնները յաշնդութեամբ լուծվեցան :

Ռուսիոյ թագաւորին եւ Հելլէական (Օւլիցցերեան) դաշնակցութեան մէջ ծագած վէճը պատերազմի առիթ ըլլալու վնասին կաւ, եւ կրնանք յուսալ որ քիչ ժամանակէն յաջող լուծում մը կը գտնեն :

Ռուսաստանի պաշտպան երեք տէրութիւններուն մէջ բարեկամութիւն հաստատուելով, Պաղղեոյ ու Ենգղիոյ զօրքերուն այսուհետեւ Ռուսաստան նրստիլը անօգուտ է :

« Եւս օրէն դործերուն վրայօք ծագած ցաւալի անհամաձայնութեան պատճառը՝ Վիթթորիա թագուհոյն եւ իմ կառավարութեանս ունեցած այն հաւասար բաղձանքն է, որով ամեն տեղ մարդկութեան եւ քաղաքակրթութեան օգտին համար աշխատիլ կուզենք : »

Ատենախօսութեան երկրորդ մասը բոլորովին Պաղղեոյ ներքին վնասին եւ կառավարութեան ըրած եւ ընկեր օգտակար անօրէնութիւններուն կը վերաբերի :

Բոլոր ժողովականները՝ ծայրագոյն դոշնութեամբ եւ քիչ քիչ աղաղակելով ընդունեցին այս ատենախօսութիւնը :

Ստորագրութիւնը լրացուցաւ 12 թուոյն մէջ կը ծանուցանեն, թէ Ստորագրութիւնը անուն թագաւորին մէջ շատ զէնք ու զաւօք պահած զրոտնակն է : Թագաւորին անօրէնք բռնվելով բանտ դրվել է :

Եւս կերեւի որ Սպահանի մէջ զրգուլութիւնը միշտ կը շարունակէ կառավարութեան դէմ :

Եւս կերեւի կը գրեն, թէ ամսոյն 5 ին երկրաւան ժամը երկուք ու կէսին միջոցներէ՝ Եւսիքի համապարսնին աշակերտներէն մէկը՝ որ Քաղիսէն հարուստ բնատնիքի մը զաւակ է եղեր, գիշերուան հազուստով եւ կապարեայ դրիւ մը բերանն առած արքունի պալատը կը մտնէ : Պուշար կայնող պահպան զինուորը զանկաւ արքունի պալատին սպասաւորներէն մէկը կարծեւրով՝ չիօսիր : Եւս պատարդը արքունի զինակցաց արահին գուռը բանալ ուղած ատենը, պալատին ճրարները փառող սպասաւորներէն մէկը կը հարցնեն իրեն թէ ո՞ր է, ինչ կուզէ : Պալատական չառնելով՝ անմիջապէս պահպան զինուոր մը կը կանչէ : Օրինու-

րը կուգայ կը նայի որ երկասարկը արահին ներս մտնի բաղնայի մը վրայ հանդարտ նստի է : Քարծնալ կը հարցնեն իրեն՝ պատասխան չտալով : Պալատին վերակացուն կուգայ, ան ալ պատասխան մը չկրնար տալու :

Եւս պատարդը ձեռքը դրողները կը խօսիլ կը հանէր, ուր երկու պալատ աւարձանակ ու գանակ մը պահած էր : Սպահանային իրեն որ բանալ պիտի դրնէն : Եւ ժամանակը սկսաւ կցկուտի եւ խանաշվութիւնները ընկաւ, ուսկից հասկըցվեցաւ որ խելքը կորսնցուցեր է :

Եւս երկասարկը ժամանակէ մը ի վեր խելագարութեան նշաններ ցոյց կուտայ եղեր զանազան անկողնային խօսքեր ընելով : Քանի մը օր առաջ ալ արքունակ մը պարսկերէ իր ընկերներէն մէկուն վրայ, որ բարեկարգութեամբ չէ պարսկերէ : Պալատը ինչ մասօք մտնելուն վրայ իրեն հարցնում ատենը՝ պատասխան տուեր է, թէ ինքը թագաւոր ըլլալու նախապահմանալ է :

Եւս երկու թիւերը պալատին մէջ անցած ժամանակը, թագաւորը ներքը զենատաղ (պիլարտո) կը խաղար : Խելքը երկասարկը վանք մը խրկուցաւ :

Եւս կերեւի կը գրեն, թէ ամսոյն 5 ին ծանուցանեն թէ զաղկացւոց ու անգղիացւոց զօրքերը բոլորովին մեկնել են :

Պուրէշէն հեռագրով լուր եկաւ, թէ Եւսարիոյ զօրքերը Քանուբեան իշխանութիւններէն քաշվել սկսել են :

Ստորագրութիւնը քաղցիկներէն Խաւալ ըրաղը 2 էրեքզասանէն լուր առած կը ծանուցանեն, թէ Խաւալը Լապա գետին քով Եւսիկ Լիւն փաշային հրամայած 2 էրեքզներուն հետ զարնվելով՝ այս վերջինները չորս հարկու հօդի կորսնցուցեր են . բայց Խաւալը ալ պարտաւորվել են Լապա գետին անդին անցնելու՝ երեք թնդանօթ եւ իրենց կառասնիկուն մէկ մասը չէրեքզներուն ձեռքը թողելով :

Լոտրայէն ու Փարսիցէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն, թէ Փարսից մէջ Ենգղիոյ գետնան լորտ Քալիի եւ Պարսից գետնան Պէնտըրի խանին մէջ եղած դեպքանախօսութիւնները յաջող փախճան մը ունեցել են, հետեւաբար անգղիացւոց ու պարսից մէջ խաղաղութիւնը հաստատվել է :

Փարսիցէն լուր կուտան, թէ Ռուսիոյ կայսրը ապրիլ ամսոյ մէջ Փարսից կ'սպասի :

Իւրաքանչիւր պատկեր վեց տասնորդա-
մէթր կամ 60 հարիւրորդամէթր քառա-
կուսի ընդարձակութիւն պիտի ունենայ .
բացատրութիւններն ալ ամեն պատկե-
րին ծակաւոր պիտի դրուին :

Ամեն մէկ բաժնի համար՝ բաժանոր-
դութեան գինը հինգ ֆրանք է, փոխադ-
րութեան ծախքն ալ բաժանորդներուն
վրայ ըլլալով :

Բոլոր այս պատկերները Փարիզ
պիտի շինուին հնարաւոր եղած ամեն
ճշգրտութեամբ կատարեալ եղած :

Հեղինակը յատկապէս խոստացած
է թէ այս գործը հայերէն լեզուով կ'ընայ
տպուիլ երբոր 120 ստորագրութիւն մե-
կէն Եւրոպայէն խրկուին հեղինակին
հասցէին :

Երբոյ հեղինակը մեզի խրկած Ս.
Եւրոպայէն տեղացոյց պատկերներէն, բո-
ւի մնացածները՝ ութ հարիւր հատ՝ վե-
ճակահանութեան դրած է, որպէս զի գա-
նոնք ամեն ալ ձեռքէ հանելով՝ յառա-
ջեկայ դարնաւ Փարիզ երթայ առաջար-
կեալ կարեւոր ձեռնարկութիւնը՝ ի գործ
դնելու :

Ս. Խճակահանութիւնը երեք վառ-
արկող թիւ պիտի ունենայ .

Առաջինը պիտի շահի 400 տեղագ-
րութիւն եւ 2200 դուռուշ :

Երկրորդը պիտի շահի 300 տեղագ-
րութիւն եւ 800 դուռուշ :

Երրորդը պիտի շահի 100 տեղագ-
րութիւն եւ 500 դուռուշ :

1857 թաւ. ապրիլ 4ին Եւրոպա-
ղէմի մէջ Պաղլմէն հիւպատոսին ներ-
կայութեամբ վեճակահանութիւնը պի-
տի կատարվի : Ամեն մէկ տոմսակին գի-
նը 3 դուռուշ է :

Այս վեճակահանութեան զրկելու
փափաքող աղբայինք՝ քանի տոմսակ որ
կուզեն, ստանլը մեզի յանձնելու եւ ի-
րենց անունը ծանուցանելու են, որ Ե-
ւրոպայէն գրելով իրենց անունը տոմ-
սակներ առնելին :

Ա. երկրորդ տեղագրութիւնները
մասնաւոր կերպով դնել ուղղող ըլլալ
նէ, նոյնպէս Ս. Եւրոպայէն գրելով՝
կրնայ բերիլ տրիվ : Եւրոպայէն տե-
ղացոյցին գինը 20 դուռուշ է հոն . իսկ
սուրբ Յարութեան տաճարինը 15 դու-
ռուշ : Նամբու ծախքը դնողին վրայ է :

Մայրաքաղաքի գաղղիներէն Դա-
նու լրագրին մէջ հետեւեալ հաճոյա-
կան խօսքերը կը կարդանք մեր ազգին
վրայօք :

« Տաճկաստանի հռոմէական չեղող
Հայերը խիստ անհիւստիանձով մը վառ-
եալ են իրենց ազգին մէջ յառաջագի-
մութիւնը փութացնելու համար, եւ
գրեթէ ամեն տարին ի վեր՝ վեհափառ
Սուլթանին հայրական խնամքէն ստա-
ցած իրաւունքներուն շնորհիւ՝ ամեն
մէկը իրենց գործերը կարգադրելը աղ-
գային ժողովներուն համար ընտրած եւ
բնութիւններուն բերնովը կրնան աղա-
տութեամբ յայտնել իրենց ուղածն ու
չուզածը : Այս ժողովները հնար եղա-
ծին չափ ուսման արարական են . անոնց ան-
գամ ըլլալու համար՝ բաւական է միայն
իր կրօնակիցներուն վատահոլութիւնը ըս-
տացած ըլլալ . եւ ժողովական ըլլալու
համար՝ չէ թէ հարստութիւն՝ այլ արժա-
նաւորութիւն կը փնտռվի : »

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ ուրբաթ իրիւրուն մահմա-
տականաց Պանտիկ Ալէքսի ըլլալով, եր-
կուշաթի օրը արքունի պալատը Բի-
բեպի արարողութիւն եղաւ : Այս պատ-
ճառաւ Բ. Գրան զբաւեցնողները նոյն
օրը դոյ մնացին :

— Օգոստոսի Ինքնակալին չորս
արու որդեղ թիւաւորութիւնը մօտ ժա-
մանակ մէջ կատարվելու վրայ ըլլալով,
կիրակի օրը մայրաքաղաքի բոլոր տաճ-
կաբեակ թաղերուն մէջ պատուէր եղաւ,
որ զաւակներ թիւաւոր ուղղողները այժ-
մէն անոնց անունը գրել տան, որ օգոս-
տոսի Ինքնակալին ծախքովը կատար-
վի :

Արմիլ թէ այս մեծ հանդէսը օգոս-
տոսի Ինքնակալին աղջկանը բարձրա-
պատիւ Մէհմէտ Ալի փաշային որդեղն
հետ ամուսնանալու հանդէսին հետ պիտի
կատարվի :

— Ծաղկային գործոց պաշտօնայ
բարձրապատիւ Մէհմէտ Ալի փաշային
խնամքը Պասալ փաշայի ծովակալու-
թեան պարտէն մինչեւ Խանս օտաւին
էրեքտրական հեռագիր մը պիտի հաստա-
վի :

— Կախինթաց թիւերնու մէջ ծա-
նուցիւնը, թէ Թոթ-Պարուի կայսերա-
կան պալատին կրօնական թանգարանէն
քանի մը մանր մանր կորուստներ եղեր
էին : Արմիլ թէ նոյն թանգարանին վերա-
կացու Մէհմէտ պէյը Հոգոս կղզին
արտը վեցաւ քիւ մը ժամանակի համար :

— Երբեք մէկ եկած նամակները բո-
կոտան թէ Բարձր Հայաստանի բոլոր եր-
կիրները ձիւնով ծածկըլած են, եւ առ-
կից կը յուսացվի որ այս տարի ցորենը
առատ պիտի ըլլայ այն կողմերը : Արդէն
ցորենին գինը ինչալ սկսեր է :

— Անցեալ երկուշաբթի գիշեր Պէյ-
օղլուի Խալափան թատրոնը աղքատաց
համար եղած պարահանդէսին արդիւնքը՝
ամեն ազգերէ հաւաքված ստորագրու-
թիւններն ալ մէկտեղ հաշուելով՝ 300
հազար դուռուշի հասնել կըսվի :

— Ուրբաթ իրիւրուն Եփէ-Պաշ-
էի թաղը բնակող Նէպլիցի Նաճի
Սիւլէյման անուն մէկը նոյն թաղին մէջ
բնակող Նաճի անուն Սիւլիպի մը
հետ մէճի բռնկելով, Նաճի գանիկա
արով զարկաւ սպաննել : Սպաննող ան-
չութեան դուռը տարվեցաւ եւ հոն դա-
տաստանը կը տեսնուի :

Սպաննող Պաղղից տեղութեան
հպատակ է :

— Գերմանացի աստղաբաշխ մը
այս օրերս գուշակութիւն կ'ընէ, թէ յա-
ռաջեկայ յունիս 13ին գիւսաւոր կամ
պոչաւոր աստղ մը երկրագունիս զար-
նդելով՝ աշխարհ տան ի վրայ պիտի
ըլլայ : Այս գուշակութիւնը թէպէտ
Եւրոպայի գիւսաւոր աստղաբաշխները
հերքեցին, եւ այսպիսի գիւսաւոր մը բը-
նական եւ աստղաբաշխական օրինօք ան-
հնարութիւնը ասացոյցներով հաստա-
տեցին, այսու լամպային գերմանացիին
տուած լուրը բազմութիւն հաւատացողներ
զտաւ ուսման մէջ, որոնք աշխարհի կա-
տարածին նշան մը համարելով այս բանը՝
մեծ փախ մէջ ինկած են :

Ար պատմեն, թէ տաճիկ վաճառա-
կան մը գաղղիացի վաճառականի մը հետ
գործ ունենալով, իր հաշիւները տեսնել
ու կարելի ուզեր է : Պարսիկ վաճառա-
կան մին ալ շատ ապրանք դնելու ելեր է
ստալ յունիս 15ին վաճարելու պայմա-
նով, այսինքն իր կարծեօքը աշխարհի

կատարածէն երկու օր ետքը :

Եւրոպայի մէջ ալ այս լուրը ծաղ-
րական գործերու տոթիկ եղած է : Խոնի
լրագիրը կը պատմէ, թէ նոյն քաղաքէն
երկուստարգ մը ամուսնանալու վրայ ըլլա-
լով, այս լուրը երկուսն պէս աղջիկը յան-
ձրն չառնէր քանի մը ամուսն համար
ամուսնանալ, թէպէտ փեսայացուն ոտը
կը կոխէ որ հարսնիկը կատարվի :

Երկար խօսքերէ ետեւ՝ վերջապէս
աղջիկը իր հարսնիկը յունիս 13ին այս-
ինքն աշխարհի կատարածէն ետքը ըլլա-
լու ձգեր է :

— Անցեալ կիրակի գիշեր Պէյօղլուի
Եփէ-Պէհի Նէպլ ըլլալով թաղը մօլէ կին մը
զանակով լեհացի մը զարկաւ սպաննել :
Այս մարդը վրան եօթն լիւր սիւնի
ունի եղեր, զորոնք ձեռքէն տանելու
համար կինն այս եղանակով ծախք ըլլա-
րներ է :

— Արմիլ թէ Տոթապահէն մին-
չեւ Թոթի հանէ ծովէ գերբը կազմով պի-
տի լուսաւորի Սալ-Պաղարէն անցնելով :

— Մայրաքաղաքի լրագիրները կը
ծանուցանեն, թէ ամսոյ 3ին կիրակի օ-
րը մայրաքաղաքի հայ ժողովրդեան մէջ
271 ամուսնութիւն եղեր է : Այս լու-
րը սխալ է . աղբային պատրիարքարանի
տուժարին արձանագրութեանցը նայելով,
նոյն օրը եղած ամուսնութեանց թիւը
116 էն աւելի է :

— Կարօնի Մաթէա քաղաքին
կախիկոպոսը զարնել ուղղը քահանային
վրայ հետեւեալ տեղեկութիւնները կու-
տայ Խոնի կրօնական Աւիլ լրագիրը :

« Այս եղանակով քանի անգամ է Սալ-
թօթ Եփէիս, որ Մաթէա քաղաքին մէջ աշ-
խարհական քահանայ էր, եւ բուսական բա-
ճախի մէջ էր : Բայց կրեւի որ բողոքականի եւ
անհատի գիրքեր կարգաւոր՝ միտքը ամբողջ
ու շփոթ էր եւ եպիսկոպոսաց կարծեցեալ բանա-
ւորութեանը, անոնց իշխանութեան ապօրինա-
ւորութեանը, եւ վերջապէս եկեղեցւոյ վերանա-
րարութեան հարկաւորութեանը վրայ : Այս ասե-
ցող գաղափարներով արդէն այնչափ զգուշա-
լու էր, որ գիրքը շուրջը իրենի հարկաւոր գտնելին :
Մաթէա գաղափարն է ետեւ, բուսական եր-
կար ժամանակէ ի վեր հանդարտ կապեր մեկտալ
Փարիզի արքեպիսկոպոսին պաշտօնակիցը լեւով,
պաշտը սեպեց ինքնալ եպիսկոպոսներուն դատմը
տալ սփռաբարձութեամբ : Իր տուժը շատ մը գիր-
քեր գանդեցաւ եկեղեցական իշխանութեանց եւ
հոգեմեկանութեան դէմ : Այս գիրքերը եւ բո-
ղոքականներու թարգմանած Պարսիկ գիրք մըն էին
իր օտարական ընթերցանքը : »

լուստորեւ ազգաց բարոյական կրթութեանը
վրայ անհատական ազդեցութիւններ կ'ընեն : Սա-
տակերութիւնները չէն միտքերը, որ Արեւմու-
եան քաղաքակրթեալ ազգաց բնկերական ժո-
ղովներէն (սալոն) օր ըստ օրէ դուրս կը վարն-
տեն եւ իրենց երկրին մէջէն բուրբոյն անհետ
ընելու կը ջանան բնկերական կենաց նախափոր
եղող բոլոր այն պատկերները սովորութիւնները,
որոնք Արեւմուտեան ծամբայ երկրով եւ երկրի
երկիր քաղաքէ քաղաք վաճառուելով կը հառ-
նին վերջապէս Արեւելք, ու հոս ափսոս, մեր
գեղեցիկութեւն նորահաս բնկերական ժողովը-
ներէն մեծ համակրութեամբ կ'ընդունվին . իբր
թէ մեր վրայ ի վաղուց հետէ սովորութիւն եւ
զանգեւ աւելի ազգային յատկութիւն մը գոր-
ծած ազդակործան եւ զգուշիկ կերբեր քիչ կը
զանուին, երբ շատ մը ծիծաղելի սովորութիւն-
ներ ալ օտարներէն պարծենալով փոխ կ'առ-
նան, որոնցմով իբրեւ մեր պատկերութիւննե-
րը լեղելիք . . . : Իսկ այն ալ ինչպէս չէ
թէ կապիտալ ամեն բաժնեւորուն հետեւելով
բարեկէ հետ շար սովորութիւններն ալ կ'օրի-
նակեմ . գուցէ ան ասեմ քիչ մը ներքեւ ըլլալ,
այլ կարծես թէ կը փնտռուի, կը քննուի, կը զա-
տեմ, եւ ինչ որ իրենք բնկերական ժողովներուն
չէն կը մարդեն, կը թեթեւեղեն եւ դուրս կը
վաճառեն, ահա անոնք Խաւսարութիւն անուա-
նելով աւ ֆառալ եւ ճորս բաւերուն քողովը
կը զարդարեն, ու աղղին զալիկ կամ անոնս
սովորութիւնները մէկըն դնելով, կուզեն զո-

նոնք նախապատիւ ընել

Գրեթէ տարբեր տարի ի վեր, քանի որ ոչ
ամբողջ եւրոպական կրթեալ ազգաց նմանելու համար
ամեն ջանք ի գործ դնել, պարօններն բարե-
կարգել, բնկերականութիւններ հաստատել, օրագիր-
ներու ամսաթիւները հրատարակել, որոնց մեծ մը
որ ժողովրդաւոր արեւմտաց թուականներու նման եւ
բեւաւրին ու անոյց ըլլալին անթիւթի մէջ
կատարեցին . . . : Վաճիկ որ, կրեմ, մեր բն-
կերական վիճակը սխալ զարգանալ, եւ աղի-
տութեան թանձր խաւարը գիտութեան թա-
փանցիկ շառաւիղներուն տեղի տալով՝ ազգեր-
նիս սխալ կամաց կամաց բարոյաւորութեան
լուստորեւ ծառայողները նշմարել, բացա-
յայտ կերպիւ կերեւոր գարոյններուն եւ օրա-
գիրներուն քով բաց մնացած ազգի մը գեղեցի-
տական եւ բարոյական կրթութեան յառաջու-
ղիւններն ու անոյց ըլլալին անթիւթի մէջ
այն է թաւանակալ խալաքութիւնները :

Այսին զի, որ եւ ինչ լեզուի մը յառ-
կութիւնները մը տեղ կ'ընան այնչափ զգալի
կերպիւ տեսնուի, եւ ժողովրդը մը տեղ
կրնայ այն լեզուին յայնչափ պարզ, այնչափ մա-
քուր եւ այնչափ յառակ կերպիւ խօսուիլ ու
արատանուիլ լեւ ու սորվիլ, չէ մի որ թաւ-
անի մէջ : Արեւմտեան կրթութեւն որ, եթէ Աստ-
ւածային արդար վեճիկներութիւնը մեր ազգին
վրայ կատարուեր ըստիւր է, եւ եթէ Ամենակա-
լը պիտի հրամայէ որ օր մը աշխարհիս ամեն

կողմը ջրուած բնակող Հայերը կարենան, իրա-
րու լեզու հասնալով, զիստ ծանցալ, եւ իմա-
նալ որ ամենքս մէկ հօր եւ մէկ մօր զաւակներ
ըլլալով պարտաւոր ենք մէկընտու երկրպագութե-
թիւնները շար նախանձն ու ատելութիւնները
վերջնելով՝ եղբայրութեան ձեռք տալ իրարու,
եթէ չեմք սխալը՝ այս ցանկով արդիւնք տես-
նելու գրեւոր միջոցներէն մէկը թաւանակու-
թիւնները պիտի ըլլան :

Եթէ քաղաքակրթութեան մէջ մոնելու
փափաքող ազգի մը համար, հասարակաց կրթու-
թիւնը կարգաւորեալ ուսումնարաններու եւ օգ-
տակար օրագիրներու միջոցաւ մատակարարելը
յառաջագիմութեան գլխաւոր միջոցն համար-
ւած է, թաւանակալ խալաքութիւններն ալ
անոր լուսուցիչը կը համարուին :

Իսկ այս կրթութեան լուսուցիչը դեռ չէ
կատարելագործուած ասիկ, 18 դար առաջ Հայաս-
տանի փառաւորութեան ժամանակ, անոր մայ-
րաքաղաքին մէջ առաջին անգամ հաստատուիլը
մեր Երզրար երջանիկ թաղաւորին բնած երեւելի
գործերուն կարգը դատուած է . անոր կատարելա-
գործութեւն ետքն ալ, Հայաստանի կրթական
ժամանակը առաջին անգամ ազգերնու անոր
վրայ ծաշակ մը տալով՝ ձեռնարկութեւն ընողնե-
րն ալ՝ Պ. Պէշիկթաշեան եւ իւր աղետամիտ
բնկերները՝ այս մասին գալով թաւանակ պիտի
վրայ ազգային պատմութեան մէջ :

Օրթագրելի Հայկական Տեսարանին խա-
խարկութիւններուն հանդիսատես եղովը լու-

պիտի բմբռնէ, թէ այն երկուստարգ սղերդակ-
ներու խոմը՝ Բնչ գիւտար գործի մը ձեռնար-
կութիւն ըրեր եւ յաջորդը են ազգին համարու-
մը գրաւելու, երբ իմաստաւ ըլլալ որ այն քաղաք
մէջը զանուած բոլոր զարգեղով միմային իրենց
աշխատութեամբ եւ ուրիշ մէկ քանի աղջտեղ
յարգեւեալ ջանիւք յառաջ եկած է, եւ թէ
նկարագրեալ սղերդակութիւններուն ամենքն ալ
Պ. Պէշիկթաշեանի յաջորդ գրչէն եղած են :
Այս, չեմք կրնար առանց յիշելու անցիլ, որ
Հայկական Տեսարանին ներքին Տօրեղը կրկնա-
կի իրաւունքներ ունի, որով կարժանանայ իւր
հիմնադրած եւ յաջորդութեամբ գրուէ հանած
գիւտար գործքին համար ազգերնու լուստոր-
եալ եւ բարեխաղանձ մասին անկեղծ շնորհակա-
լութիւններ ընդունելու իրենէ միակ փարձատրու-
թիւն թէ իր եւ թէ իւր ազգասեր բնկերնե-
րուն այսպիսի ազգօգուտ գործի մը ձեռնարկու-
թիւն ըրած ըլլանուն համար :

Թաւանակութեան նպատակին եւ օգուտ-
ներուն վրայ այս անգամ այսչափ մը խօսելէն եւ
տեւ, Պ. Պէշիկթաշեանի աշխատանքներն ու
ներկայացուցած սղերդակութիւններուն քննու-
թիւնը ուրիշ յօդուածի մը կը թողուի :

Տ. Ռ. Եւստակի

